Արձանագրություն N 4

«ԵՔ-ԲՄԱՇՁԲ-19/5» ծածկագրով գնման ընթացակարգի հանձնաժողովի նիստի

ք. Երևան

13..02.2019 թ.
ժ. 10:00

Մասնակցում են

Հանձնաժողովի նախագահ՝ Է. Շաքարյան
Հանձնաժողովի անդամներ՝ Ե. Մատասյան (ԲԱ), Բ. Տեր-Թովմասյան (ԳԱ)
Լ. Գևորգյան (ԳԱ), Ս. Գևորգյան (ԲԱ)
Հանձնաժողովի քարտուղար՝ Գ. Հուրոյան

I. <u>ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե ներկայացված հարցման և առաջին տեղ զբաղեցրած մասնակցի կողմից որակավորման պահանջներին իր համապատասխանությունը հիմնավորող փաստաթղթերը ներկայացնելու մասին</u>

(Է. Շաքարյան)

1. Ընդունել ի գիտություն որ.

1.1 Գնումների գործընթացի կազմակերպման մասին>> ՀՀ կառավարության 526-Ն որոշմամբ հաստատված կարգի/այսուհետ՝ Կարգ/ 43-րդ կետի 3-րդ ենթակետի՝ հարցում է ներկայացվել ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե 1-ին տեղ զբաղեցրած մասնակցի <<Ֆինանսական միջոցներ>> որակավորման չափանիշին վերաբերող հրավերով նախատեսված որակավորման պահանջի առկայության վերաբերյալ:

ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեն սահմանված ժամկետում ներկայացրել է եզրակացություն, համաձայն որի «Կամպարե» ՍՊԸ-ի «Ֆինանսական միջոցներ» որակավորման չափանիշը չի համապատասխանում է հրավերով սահմանված պահանջներին: «Կամպարե» ՍՊԸ ն հայտը ներկայացվելու օրվա դրությամբ ունի ՀՀ պետական բյուջեի նկատմամբ ժամկետանց հարկային պարտավորություններ 52000.0 /հիսուներկու հազար/ ՀՀ դրամի չափով,

Վերոգրյալով պայմանավորված՝ գնահատող հանձնաժողովը ղեկավարվելով ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման մասին» կարգի 44-րդ կետի՝ որոշեց մերժել «Կամպարե» ՍՊԸ-ի հայտը,

Գնահատող հանձնաժողովի որոշմամբ Բավարար գնահատված հայտեր ներկայացրած մասնակիցների թվից՝ նվազագույն գնային առաջարկ ներկայացրած մասնակցին նախապատվություն տալու սկզբունքով

- 1-ին տեղ զբաղեցնող է ճանաչել «Կոտայք Շին» ՍՊԸ -ին:
- 2-րդ տեղ զբաղեցնող է ճանաչվել «Որդի Հրայր» ՍՊԸ -ին:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 5, դեմ 0:

2. ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե հարցում ներկայացնելու և 1-ին տեղ զբաղեցրած մասնակցին ծանուցելու մասին

(Է. Շաքարյան)

2.1 Հիմք ընդունելով <<Գնումների գործընթացի կազմակերպման մասին>> ՀՀ կառավարության 526-Ն որոշմամբ հաստատված կարգի 43-րդ կետի 3-րդ ենթակետը՝ գնման ընթացակարգի 1-ին տեղ զբաղեցրած մասնակցի հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ժամկետանց պարտավորությունների և <<Ֆինանսական միջոցներ>>

որակավորման չափանիշին վերաբերող հրավերով նախատեսված որակավորման պահանջի առկայության վերաբերյալ հարցում ներկայացնել ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե:

2.2 Հիմք ընդունելով <<Գնումների գործընթացի կազմակերպման մասին>> ՀՀ կառավարության 526-Ն որոշմամբ հաստատված կարգի 43-րդ կետի 4-րդ ենթակետը՝ Ծանուցել 1-ին տեղ զբաղեցրած մասնակցին հրավերով սահմանված ժամկետում (երեք աշխատանքային օր) ներկայացնել որակավորման չափանիշները հիմնավորող՝ հրավերով նախատեսված փաստաթղթերը: Հրավերով սահմանված ժամկետում փաստաթղթերը չներկայացվելու դեպքում հանձնաժողովի կողմից կմերժվի առաջին տեղը զբաղեցրած մասնակցի հայտը և փաստաթղթեր ներկայացնելու պահանջ կներկայացվի հաջորդ տեղը զբաղեցրած մասնակիցներին:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 5, դեմ 0:

3. Ընթացակարգի հանձնաժողովի հաջորդ նիստի անցկացման օրը, ժամը և վայրը հաստատելու մասին

(Է. Շաքարյան)

3.1 1-ին տեղ զբաղեցրած Մասնակցի որակավորումը հավաստող փաստաթղթերը գնահատելու նպատակով՝ Գնահատող հանձնաժողովի նիստը հրավիրել 1-ին տեղ զբաղեցրած Մասնակցի կողմից որակավորման փաստաթղթերը ներկայացնելու և ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտից հարցումը ստանալու օրվան հաջորդող աշխատանքային օրվա ժամը 10:00-ին, Երևանի քաղաքապետարանի վարչական շենքում, հասցեն՝ ք. Երևան, Արգիշտիի փողոց 1 հասցեում:

Ընդունվել է որոշում՝ կողմ - 5, դեմ - 0:

Հանձնաժողովի		
Նախագահ՝		Է. Շաքարյան
Անդամներ՝		Ե. Մատասյան
		Լ. Գևորգյան
		Բ. Տեր-Թովմասյան
		Ս. Գևորգյան
Քարտուղար՝		Գ. Հուրոյան